



ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՄԵՌՈՆԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Վրացի անվանի պատմաբան և հայագետ Իլիա Աբուլաձեն 1940 թվի մարտի 31-ին Թբիլիսիի Ն. Յա. Մառի անվան ինստիտուտի խմբագրությանն էր հանձնել պատմական նշանակություն ունեցող մի հոդվածաշարք՝ «Նոր վկայություններ աղվանական գրերի գոյության մասին» վերնագրով¹։ Այս հոդվածը մեզ հետաքրքրում է նաև նրանով, որ այդտեղ հիշատակվում են երկու հայկական ձեռագրեր՝ թարգմանված աղվաներենից (Էջմիածնի ձեռագիր հմր. 2121, հին համարակալմամբ՝ հմր. 2133)։ Այս ձեռագիրը արտագրել է Ղապար Վարդապետը 1726 թվին։ Այնուհետև գտնվել է նաև նույն բովանդակությամբ և նույն խմբագրությամբ ավելի հին մի ձեռագիր (հմր. 3070, արտագրված 1669 թվին)։ Հնարավոր է, որ հետագայում գրադարանն առավել հին ձեռագիր գրություններ, և այն ժամանակ դրվի հիշատակությունների հրատարակության ժամանակագրության հարցը։

Առաջին ձեռագիրը, որը գտնվել էր մագիստրոս Մ. Տեր-Մովսեսյանի ձեռքի տակ, ծանոթ է «Գրիգոր Տաթևացու քարոզչիք» վերնագրով։ Բայց այդ գրքի բովանդակության մեջ բերված Գր. Տաթևացու 80 քարոզներից բացի, հիշյալ ձեռագիրը բովանդակում է նաև՝

ա) Գրիգոր Լուսավորչի ջատագովությունը։
բ) Հովհան Ոսկեբերանի ջատագովությունը Գրիգոր Լուսավորչին։

գ) Պատմություն մեռնոօրինության մասին։

դ) Հառ բաղկացած 67 հատվածներից։

Այս գրվածքներից առավել ուշադրության է արժանի «Պատմություն մեռնոօրինության մասին» գրվածքը, որը, ինչպես նշված է վերնագրում, թարգմանված է աղվաներենից։ Գրվածքի վերնագիրը հետևյալն է.

«Յաղագս պատմութեան սուրբ աստուածային իդոյն, պոր գտեալ սրբոց հարցն յարևելք, յԱղուանի գիրս, և թարգմանեցին ի հայ գիր և վասն մարմնոյն սրբոյն Յովհաննու Կարապետին» (Ձեռագիր հմր. 3070)։

Տեքստն սկսվում է այսպես. «Արդ՝ պատմեսցուք յաղագս սուրբ իդոյն, թե ուստի է...»։ Եվ Իլիա Աբուլաձեն տալիս է տեքստի կրճատ բովանդակությունը. «Մովսես մարգարեն Սինա լեռան վրա Աստծուց անուշահոտ ծաղիկներ ստանալով՝ պատրաստեց դրանցից մեռոն, որով հետագայում օծում էին մարգարեներին և թագավորներին։ Երբ խորայելացիները հաստատվեցին Ավետայց երկրում, այդ մեռոնը պահվում էր իրենց մոտ՝ Երուսաղեմի տաճարում։ Տաճարի կործանումից հետո, Եղիսաբեթը՝ Չաքարիա բահանայի կինը, մեռոնը տարավ լեռան վրա և ձեղքելով ժայռը՝ այն պահեց այնտեղ։

Չաքարիայի և Եղիսաբեթի որդի Հովհաննեսը սկսեց մկրտել, նա այդ մեռոնով օծում էր ժողովրդին։ Երբ Հերովդես թագավորի հրամանով գլխատեցին Հովհաննեսին, մեռոնը վերցրեց մի մեղավոր կին (Մարիամ Մագդաղենացին), որն էլ հետագայում օծեց դրանով Քրիստոսին։

Դրանից հետո, երբ Քրիստոսի աշակերտները մեկնեցին Ավետարանի քարոզչության, այդ մեռոնը վերցրեց իր հետ Թադևոս առաքյալը՝ հայոց առաջին լուսավորիչը, որի միջոցով բուժվեց Աբգար թագավորի որդին։ Թադևոս առաքյալը մեռոնը մի ծառի վրա թողնելով՝ մեկնեց Սանատրուկ թագավորի մոտ։ Հետագայում մեռոնի պահված տեղի մասին տեսիլքով իմացավ հայոց երկրորդ լուսավորիչ Գրիգորը, որը Տրդատ թագավորի աշակցությամբ կառուցեց այդ վայրում մի եկեղեցի Հովհաննու Կարապետի (Մկրտչի) անունով։ Այստեղ, Երրորդ տ վայրում (Տարոն գավառի Մուշ քաղաքից ոչ հեռու, դեպի արև-

¹ Սույն հոդվածաշարքը տես ռուս լեզվով, թրթռ. II, 1976, տեղումներ։

վելք) պահվում է անսպառ այդ մեռունը:

Այստեղ էլ գտնվում է Եղորդուտի հայտնի միաբանությունը:

Սույն հոդվածը լրացնելու և եզրափակելու համար տեղին է այստեղ մի մեջքերում կատարել Ն. Ս. Օծություն Տ. Տ. Վապգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի խոսած քարոզից՝ 1983 թվի սեպտեմբերի 25-ին նոր մեռունի օրհնության արարողությունից հետո.

«Մենք հավատում ենք, որ այս օրհնված մյուռնի ամեն մի կաթիլի մեջ շողում է մի ճառագայթ աստվածային փառաց լույսից,

քանի որ ամեն անգամ նոր մյուռնի մեջ իմանվում է հին մյուռնի: Ամեն նոր օրհնված մյուռնի մեջ կա մի մասնիկ Սուրբ Գրիգոր Լուսավորչի օրհնած առաջին մյուռնից...»:

Այս ցմրուխտ մյուռնով մեր ժողովրդի կանքը թող դառնա էլ ավելի օծուն Սուրբ Հոգու շնորհներով, Սուրբ Հոգու՝ լուսավորող, մխիթարող ու խաղաղարար շնորհներով»:

ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆ

